ի դիւրս մարգարէտինս և ի խաղս՝ որ եղեր ընդունող մաքուր մարմնոյ նորա։

Աւրհնեալ ես ի բնաւս ա՝ և ի բաժինս՝ զի էջ առ քեզ անէջն և անեղն՝ լուսաւորեաց և աւրհնեաց և սրբեաց զքեզ։

Աւրհնեալ ես դու ի հողս և ի հողէղէնս՝ զի խառնեցաւ ընդ քեզ երրորդութեանն տաղաւարդ՝ և անմեղ մարմինդ ոսկիացեալդ ի քուրայս՝ ի քեզ ծածկեցաւ։

Դու ես երանելի՝ զի շաղախեցար արեամբ երեսուն և ութիցն՝ և ներկեցար վարդագոյն՝ ներկողա որդան. ծիրանեցար՝ ծարիւրեցար՝ պարարեցար՝ պարարացար՝ և պարգաւաճեալ պսակեցար։ Երանի է քեզ և բնակչաց քոց՝ որ եղեր դամբան կուսից և յարկ յաւիտեան անուանել զանուն նոցա ի քեզ. ի քեզ հրաշագործեաց Աստուած՝ որպէս ի Տայան դաշտին։

Երանի հողոյն ուր հողացաւ մարմինն՝ և երանի աւդոյն յոր միացաւ շունչն՝ և թէպէտ և մեկուսացաւ ի սդալեացս տեսանելոյ՝ սակայն իմանալի հոգւովն ընդ մեզ է անանջատ՝ և զաւրութիւն հոգւոյն անդատելի է յոսկերաց սորա՝ որպէս ցուցաւ յԵղիսէոս [թղ. 19բ]։

ա. Ձեռ. բնավս.